



ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1, հեռ.՝ (+374 10) 514 101, 514 200, ֆաքս՝ (+374 10) 545 944, էլ.փոստ՝ inbox@yerevan.am

№ 01/6969

« 10 » 08 2017թ.

Մեծարգո Ջորի Բալայան

Ջերմորեն շնորհավորում եմ Ձեզ և «Արմենիա» առազաստանավի անձնակազմի բոլոր անդամներին՝ առաջին հայկական շուրջերկրյա նավարկության ավարտի կապակցությամբ: Աշխարհի շուրջ և սփյուռքի ճանապարհներով կատարած Ձեր առաքելությունը ամուր խարիսխ է աշխարհասփյուռ մեր հայրենակիցների ազգային ոգու պահպանման ու հզորացման համար: Ձեր նախաձեռնությունը, որն արժանի է բարձր գնահատանքի, հայրենասիրության յուրովի դրսևորում է՝ մեր ազգային ինքնությունը աշխարհին լսելի դարձնելու և պետականության արժեքները նորովի ներկայացնելու առումով:

Կրկին շնորհավորում եմ բարեհաջող նավարկության ավարտի առթիվ և ցանկանում նորանոր նվաճումներ Ձեր անձնակազմին:

ԿԱՐԵՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ